efes
INSURANCE

ՍԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



2025

ԴԵՊԻ ԿԱՊՈՒՅՑ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

ԴԵՊԻ ԿԱՊՈՒՅՑ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

Տարեկան հաշվետվություն
2025

efes
INSURANCE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

05 Ներածություն

05 Ուղերձ Խորհրդի նախագահից
06 Ուղերձ Գլխավոր գործադիր տնօրենից
08 ԷՖԵՍ-ի ճանապարհը՝ կառամատույցից դեպի կապույտ հորիզոն

11 Բիզնես ակնարկ

12 2025 թվականն ամփոփ
13 Կամավոր ապահովագրության շուկայի մասնաբաժին
13 Շուկայում առաջատար դիրք կամավոր ապահովագրության ուղղություններում
14 Հաճախորդների գոհունակության ցուցանիշ (NPS)
14 Հատուցումների դրական արդյունք
15 Հաճախորդների գոհունակության գնահատական (CSAT)
16 Ֆինանսական կայունություն և աճ
17 Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ և պարտավորություններ
17 Ներդրումներ տեխնոլոգիաների և նորարարությունների մեջ

18 Առողջության համընդհանուր ապահովագրությունը Հայաստանում

19 Տարվա նշանակալից իրադարձություններ

19 Գնորդի վճարումների ապահովագրություն
20 Ինթելլիջենթ Մենեջմենթ
21 Պարտատոմսերի թողարկում

22 Ռազմավարական ուղի

23 Մեր արժեքները
24 Ապագայի տեսլականը և նպատակը

25 Ապահովագրություն կյանքի տարբեր իրավիճակների համար

28 Կորպորատիվ ապահովագրական փաթեթներ

29 Մեր գործընկերները

30 Նոր համագործակցություններ

31 Համագործակցություն Acba Amex քարտապանների համար
31 Ճամփորդության ապահովագրություն EvocaTouch-ով
31 Balt Assistance

32 Վերաապահովագրություն

32 Միջազգային գործընկերներ
33 Նոր համագործակցություններ

34 Բարելավելով հաճախորդների կենսափորձը

35 EFES բջջային հավելված

38 Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

40 ԷՖԵՍ-ը՝ Կողբ-Վարդավառի գլխավոր հովանավոր
41 ԷՖԵՍ-ի գույնզգույն օդապարիկը վեր սլացավ

42 Գործատուի դիրքավորումը շուկայում

42 Մեր մշակույթը
44 ԷՖԵՍ-ի մարդիկ
45 Ընկերության խորհուրդը
46 Ընկերության ղեկավար կազմը
47 Զարգացում և ուսուցում
47 Ներգրավվածություն և թիմային փորձառություն

48 Անկախ աուդիտորի եզրակացություն և ֆինանսական հաշվետվություններ

Ճանապարհը հստակ է նրանց համար,
ովքեր խիզախում են գործել

Ուղերձ Խորհրդի նախագահից

Դեվի Խեչինաշվիլի
Խորհրդի
նախագահ

Հարգելի՛ գործընկերներ,

Այս տարին ԷՖԵՍ ապահովագրական ընկերության համար եղել է դրական փոփոխություններով, համարձակ նախագծերով և հետևողական աշխատանքով լեցուն շրջան: Մենք գործել ենք արագ փոփոխվող աշխարհում, բախվել տարբեր մարտահրավերների, միևնույն ժամանակ՝ շուկային ներկայացնելով միջազգային լավագույն փորձն ու նախագծային պրոդուկտները:

Մենք ձգտում ենք զարգացնել այնպիսի ապահովագրական ուղղություններ, որոնք կնպաստեն մարդկանց առողջությանը և երկարաժամկետ բարեկեցությանը: Մեր գրանցած բոլոր ձեռքբերումների հիմքում ընկած են գրագետ ապահովագրական լուծումները, ռիսկերի պատասխանատու կառավարումը և, իհարկե, թիմի նվիրված աշխատանքը:

Հայաստանում ապահովագրության ոլորտը ամուր հիմք ունի: Սակայն հասարակության շրջանում նկատվում է անհրաժեշտություն ապահովագրությունը դիտարկել, որպես բարեկեցիկ կյանքի ապահովման գործոն: Եթե արտերկրում կամավոր ապահովագրության պրակտիկան ընդունված երևույթ է, Հայաստանն այդ իմաստով դեռ երիտասարդ է, որի առաջ մեծ հորիզոն է բացվում մարդկանց կրթելու և ներկայացնելու ապահովագրության ընձեռած հնարավորությունները:

Տնտեսապես զարգացած երկրներում հասարակության կենսակերպն ինքնին պարտադրում է ապահովագրություն ունենալու անհրաժեշտությունը: Այդ է պատճառը, որ մենք մշտապես փորձում ենք շուկա ներմուծել միջազգային ստանդարտներով մշակված պրոդուկտներ՝ մարդկանց ևս մեկ քայլ մոտեցնելով անհոգ և դրական կյանքին: ԷՖԵՍ-ն իրեն տեսնում է ոչ միայն որպես ապահովագրական ծառայություններ մատուցող ընկերություն, այլև որպես պատասխանատու կորպորատիվ «քաղաքացի»: Մեր նպատակն է գործել այնպես, որ տնտեսական հաջողությունն իր հետ սոցիալական արժեք ստեղծի:

Այս տարի մարտահրավերներ ևս ունեցել ենք, որոնց արձագանքել ենք պատասխանատու և հավասարակշռված մոտեցմամբ՝ դրանք դիտարկելով ոչ միայն որպես սահմանափակում, այլև որպես զարգացման հնարավորություններ: Այս մոտեցումը հիմք է հանդիսացել մեր կայուն դիրքի պահպանման և հաճախորդների ու գործընկերների վստահության ամրապնդման համար: ԷՖԵՍ-ը շարունակում է գործել որպես ֆինանսապես կայուն ընկերություն՝ պատրաստ շարունակելու իր զարգացման ուղին:

Առջևում մեզ սպասում են նոր հորիզոններ: Դրանց մենք կհանդիպենք նույն սկզբունքներով՝ պատասխանատվությամբ, հեռանկարային մտածողությամբ և հստակ համոզմամբ, որ կայուն ապագան կառուցվում է այսօր ընդունվող որոշումներով:

Հարգանքով՝
Դեվի Խեչինաշվիլի

Devi Khechinashvili

Ուղերձ Գլխավոր գործադիր տնօրենից

Հարգելի՛ գործընկերներ, հաճախորդներ և ընկերներ,

ԷՖԵՍ-ի հիմնադրումից ի վեր, մենք կարողացանք հանրությանն ապացուցել, որ Հայաստանում հնարավոր է կառուցել մարդակենտրոն բիզնես մոդելով ընկերություն, որն իր էությամբ կունենա սոցիալական նշանակություն և կծառայի հասարակության բարօրությանը: Հենց այս գաղափարն է դեռ 1997 թվականից շարժիչ ուժ հանդիսացել մեր փոքրաթիվ թիմի համար, որը ջանասիրաբար փորձում էր կառուցել ապահովագրության ինստիտուտը նորանկախ Հայաստանում:

Այսօր ԷՖԵՍ-ը ունենալով մոտ 30 տարվա հիմնավոր փորձ ոլորտում, շարունակում է զարգացնել ընկերությունը՝ ներդնելով միջազգային փորձը և արագ զարգացող աշխարհի պահանջները: Այս ընթացքում համագործակցել ենք համաշխարհային վերաապահովագրական ընկերությունների, բանկերի, լավագույն տեխնոլոգիական ընկերությունների և առաջատար բժշկական կենտրոնների հետ՝ կառուցելով վստահության և մասնագիտական գիտելիքների ու փոխադարձ աջակցման վրա հիմնված համայնք:

2025 թվականը շրջադարձային էր մեր ընկերության համար՝ հայաստանյան շուկայում մի շարք նոր պրոդուկտներ ներկայացնելու և գործարկելու տեսանկյունից: 2026 թվականից երկրում արդեն իսկ գործելու է առողջության համընդհանուր ապահովագրությունը, որի շրջանակում մեր հաճախորդներին պատրաստվում ենք առաջարկել առավել ճկուն և նորարար պրոդուկտներ: Նշանակալից ձեռքբերում էր նաև գնորդի վճարումների ապահովագրությունը՝ միջազգային երաշխիքով, որն ապահովում է կառուցապատող ընկերության գնորդի ներդրման լիակատար անվտանգությունը մինչև շինարարության ավարտը: Այս պատմական նախաձեռնությունը հայկական շուկայում տեղայնացվել է միջազգային չափանիշներով, իսկ ինքնին նախագիծն ամբողջ աշխարհում դիտվում է որպես վստահելի և կայուն զարգացման ցուցիչ:

2025 թվականին Ընկերության ապահովագրավճարների պորտֆելը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ **աճել է 13%-ով՝** կազմելով **13.3 մլրդ ՀՀ դրամ**: Ավելին, նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատ Ընկերության ընդհանուր ակտիվներն աճել են **29.21%-ով՝** կազմելով **11.5 մլրդ ՀՀ դրամ**:

ԷՖԵՍ-ի համար ռազմավարական տեսանկյունից չափազանց կարևոր է հաճախորդակենտրոն մոտեցումը. մենք մշտապես փորձում ենք մարդուն դիտարկել կենտրոնում և նրա շուրջը կառուցել առաջարկվող պրոդուկտներն ու ծառայությունները, որոնք անհրաժեշտ են հենց իրեն: Այս տեսանկյունից մեր հաջողության կորիզը Ինթելլիջենթ

Մենեջմենթ հոլդինգի մաս կազմող ընկերություն լինելն է, որի շնորհիվ հնարավորություն ենք ստանում կառավարել մեր հաճախորդի կենսափորձի ողջ ուղին՝ առաջին զանգից մինչև ապաքինում:

Ծարունակել ենք նաև զարգացնել մեր թվային ուղղությունները՝ բջջային հավելվածում ներկայացնելով մի շարք նոր լուծումներ, այդ թվում՝ քարտերի կցագրումը և ավտոմատ վճարումների համակարգը, թվային քարտը (wallet card), Roadcare Assistance ծառայությունների պատվերն անմիջապես հավելվածով անելը և այլն: Մեր նպատակը եղել և մնում է ստեղծել պարզ, հասանելի և վստահելի ապահովագրական լուծումներ յուրաքանչյուրի համար:

Մենք նվիրված ենք նաև կայունության և պատասխանատվության գաղափարին, որը շոշափելի ենք դարձնում մեր ԿՍՊ նախագծերի իրականացման միջոցով: Կայուն ապագան ստեղծվում է, երբ գործում ենք միասին և համատեղ ջանքերով ձևավորում այն միջավայրը, որտեղ յուրաքանչյուր ոք իրեն կարևոր ու պաշտպանված է զգում:

Ամփոփելով խոսքս՝ ցանկանում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել մեր գործընկերներին, հաճախորդներին և աշխատակիցների հմուտ թիմին՝ վստահելու և անձնվեր համագործակցության համար:

Հարգանքով՝
Արևշատ Մելիքսեթյան

Արևշատ Մելիքսեթյան
Գլխավոր գործադիր տնօրեն

ԷՖԵՍ-ի ճանապարհը՝ կառամատույցից դեպի կապույտ հորիզոն

2023-2024 թվականներն **ԷՖԵՍ** ապահովագրական ընկերության համար դարձան կայացման շրջափուլեր. տարիներ, երբ ամրապնդեցինք մեր հիմքերը, ձևավորեցինք նոր մեխանիզմներ և վերջապես, կառուցեցինք այն համակարգը, որի վրա հենվում է ապագայի հեռանկարը:

Այսօր մենք կանգնած ենք նոր հորիզոնի առջև՝ ամուր հիմքերով, փորձառու թիմով և հաստատակամ գործողություններով, որպեսզի ոչ թե փնտրենք նոր ուղղություններ, այլ կառուցենք դրանք:

«Կապույտ հորիզոնն անցյալի համառ և նվիրական աշխատանքն է, հաստատուն ու ներդաշնակ ներկան և կատարելության ձգտող ապագան»:

Այն մեր հաղթանակն է՝ տարիների նպատակային աշխատանքի, թիմային համառության և մասնագիտական նվիրումի արդյունքը:

Մենք չենք շրջանցում
ալիքները, մենք
հաղթահարում ենք դրանք

ԲԻԶՆԵՍ ԱԿՆԱՐԿ

ԷՖԵՍ-ը շարունակում է ամրապնդել իր դիրքերը՝ որպես կայուն աճող և ռազմավարական առումով հետևողական ապահովագրական ընկերություն Հայաստանի շուկայում:

Մեր նպատակն է շարունակաբար կատարելագործել ապահովագրական պրոդուկտները, զարգացնել թվային լուծումները և նպաստել հաճախորդի կենսափորձի պատշաճ կառավարմանը՝ հավատարիմ մնալով մեր հիմնական սկզբունքին՝

կարևորը դու ես:

Առանց երկմտանքի առաջ շարժվելու պատրաստակամություն

2025 թվականն ամփոփ

2025 թվականի ընթացքում Ընկերության ընդհանուր հավաքագրած ապահովագրավճարը կազմել է **13.3 մլրդ ՀՀ դրամ** 2024 թվականի համեմատ (11.8 մլրդ դրամ) աճելով **13%**-ով:







Ընկերության մասնաբաժինը ՀՀ ապահովագրական շուկայում 2025 թվականին կազմել է **16.1%**՝ չմասնակցելով պարտադիր ապահովագրության ուղղություններին, ինչպիսիք են ԱՊՊԱ-ն և սոցիալական փաթեթի շրջանակում առաջարկվող առողջության ապահովագրությունը:

Կամավոր ապահովագրության շուկայի մասնաբաժին

ԷՖԵՍ-ը շարունակել է իր կայուն զարգացման ընթացքը՝ ամրապնդելով իր առաջատար դիրքը կամավոր ապահովագրության ոլորտում:

Շուկայի մասնաբաժին 2024

31.5 % → **1**-ին տեղ

Շուկայի մասնաբաժին 2025

30.4 % → **1**-ին տեղ



Շուկայում առաջատար դիրք կամավոր ապահովագրության ուղղություններում

Առողջության ապահովագրություն



Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն



Ճամփորդության ապահովագրություն



Գույքի ապահովագրություն



Մեքենայի ապահովագրություն



Հաճախորդների գոհունակության ցուցանիշ (NPS)



Հատուցումների դրական արդյունք

Ապահովագրված գույքի քանակ

13,000+

Միջին հատուցում

303,357

ՀՀ դրամ

Հատուցման դիմումների բավարարման %

89%

Ապահովագրված մեքենաների քանակ

6,000+

Միջին հատուցում

398,264

ՀՀ դրամ

Հատուցման դիմումների բավարարման %

95%

Ապահովագրված անձանց քանակ

60,000+

Միջին հատուցում

22,112

ՀՀ դրամ

Հատուցման դիմումների բավարարման %

98%

2025 թվականի ընթացքում ավելի քան **220,000** հաճախորդ է ընտրել ԷՖԵՍ-ը՝ որպես իրենց հուսալի գործընկեր ապահովագրության ոլորտում:

220,000+

Հաճախորդներ (2024թ.-ի համեմատ)

+47%

Առողջության ապահովագրություն

60,000+

Մեքենայի ապահովագրություն

6,000+

Ճամփորդության ապահովագրություն

150,000+

Տան ապահովագրություն

13,000+

Հաճախորդների գոհունակության գնահատական (CSAT)

Տարվա ընթացքում ստացել ենք
102,618 զանգ

Գնահատականների քանակ

500

Միջին արդյունքը

(4.916) ≈ 5★

Ֆինանսական կայունություն և աճ

Զուտ շահույթի աճ

2024
76.5
մլն ՀՀ դրամ

2025
409.1
մլն ՀՀ դրամ

+5.4 անգամ

Ներդրումային եկամտի աճ

2024
315.5
մլն ՀՀ դրամ

2025
384.4
մլն ՀՀ դրամ

+21.8%

Ակտիվների եկամտաբերության գործակից (ROA) **4** %

Ներդրումների եկամտաբերության գործակից (ROI) **12.6** %

Կայունություն և իրացվելիություն

Կապիտալի համարժեքություն **1.75**

Իրացվելիության գործակից **1.31**

Կապիտալի համարժեքության գործակիցը կազմում է **1.75**, ինչը բարձր է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանած, ինչպես նաև ընկերության ներքին սահմանաչափերից:

Իրացվելիության գործակիցը կազմում է **1.31**, ինչը նույնպես փաստում է Ընկերության ֆինանսական կայունության մասին:

Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ և պարտավորություններ



Ներդրումներ տեխնոլոգիաների և նորարարությունների մեջ

2025թ.-ին ԷՖԵՍ-ը **268.6 մլն** ՀՀ դրամի ներդրում է կատարել տեխնոլոգիական լուծումների և նորարարությունների զարգացման մեջ՝ ներառյալ թվային հարթակների կատարելագործումը:

268.6 մլն
ՀՀ դրամ ներդրում

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2026թ-ի հունվարի 1-ից Հայաստանում մեկնարկել է Առողջության համընդհանուր ապահովագրության նախագիծը, որի նպատակն է քաղաքացիներին տրամադրել որակյալ բժշկական ծառայություններ՝ նվազեցնելով անձնական վճարումները և բարելավելով առողջապահական ծառայությունների հասանելիությունը:

Համակարգի ներդրման շնորհիվ Հայաստանի Հանրապետության **քաղաքացիները և ռեզիդենտներն** ունենալու են առողջապահական ծառայություններից **անվճար** օգտվելու հնարավորություն: ԷՖԵՍ-ն իր հաճախորդներին առաջարկելու է փաթեթների ճկուն և նորարար լուծումներ՝ ի լրումն առողջության պարտադիր ապահովագրությանը:

Հատկանշական է, որ ԷՖԵՍ-ը համագործակցության հուշագիր է ստորագրել Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի հետ՝ Հայաստանում համակարգի արդյունավետ ներդրման ու զարգացման նպատակով:

ՏԱՐՎԱ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գնորդի վճարումների ապահովագրություն

Քաղաքը կենդանի օրգանիզմ է, որին նույնպես պաշտպանություն և հոգատարություն է հարկավոր զարգանալու համար: Յուրաքանչյուր նոր կառուցապատման նախագծի հետ գալիս են նոր պահանջներ, որին պետք է համընթաց քայլի նաև ժամանակակից ապահովագրական շուկան:

ԷՖԵՍ ապահովագրական ընկերությունը, **ԱՐՏՔՈՄՓԱՆԻ** կառուցապատող ընկերությունը և **ԱՐԳՈ ՌԻԵԼԹԻ** անշարժ գույքի գործակալությունը, պատմական քայլ կատարելով, առաջին անգամ Հայաստանում ներդնում են գնորդի վճարումների ապահովագրությունը՝ միջազգային երաշխիքով:

Հայկական շուկայում սա եզակի ֆինանսական գործիք է, որը հիմնված է միջազգային լավագույն փորձի վրա և 100% երաշխավորում է, որ գնորդը կստանա իր տարաժամկետ վճարումների ամբողջ գումարը, եթե կառուցապատող ընկերությունը չկատարի իր պայմանագրային պարտավորությունները:

Հետևելով ԷՖԵՍ-ի հաճախորդակենտրոն մոտեցմանը՝ այս ապահովագրությունը գնորդի համար չի նախատեսում ֆինանսական որևէ հավելյալ բեռ, միևնույն ժամանակ կառուցապատողի և նախագծի մասնակից ընկերությունների համար ստեղծում է **բարձր պատասխանատվության միջավայր:**

Տարաժամկետ վճարումների ամբողջ գումարի ստացման
100% երաշխիք
գնորդի համար

կառուցապատող ընկերության կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում

ARGO REALTY COMPANY

ARTCOMPANY

Ինթելլիջենթ Մենեջմենթ

Ինթելլիջենթ Մենեջմենթը ներդրումային և հոլդինգային ընկերություն է, որի հիմնական առաքելությունն առողջապահական և ապահովագրական համակարգերի արդյունավետ կազմակերպումն է՝ մարդկանց համար դրանք առավել հասանելի, կառավարելի և հստակ դարձնելով:

Ինթելլիջենթ Մենեջմենթ հոլդինգն իր էկոհամակարգում համախմբում է երեք կազմակերպություն, որոնք միասին ստեղծում են **առողջապահական և ապահովագրական աջակցության ամբողջական շղթա:**

INTELLIGENT MANAGEMENT

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

efes INSURANCE

Bonus Assistance powered by efes INSURANCE

800+
աշխատակիցներ

16.8 մլրդ
ՀՀ դրամ հասույթ

300,000
տարեկան հաճախորդ

135,000
կարգավորված ապահովագրական հատուցումներ

530,000
իրականացված բժշկական միջամտություններ

Վարդանանց-Քըրք Քըրքորյան պարտատոմսերի թողարկում

2025 թվականին Ինթելլիջենթ Մենեջմենթ հոլդինգը մեկնարկեց իր զարգացման նոր փուլը՝ առաջին անգամ մուտք գործելով հայկական կապիտալի շուկա կորպորատիվ պարտատոմսերի թողարկմամբ:

Պարտատոմսերի թողարկման տեղաբաշխումն իրականացվել է **1 մլրդ ՀՀ դրամ** և **2.5 մլն ԱՄՆ դոլար** ծավալով, իսկ տեղաբաշխողը Ամերիաբանկն է, որը կապիտալի շուկայում փորձառու մասնակից է:

Ներգրավվող ֆինանսական միջոցների մի մասն ուղղվել է **«Վարդանանց-Քըրք Քըրքորյան»** ժամանակակից բազմաֆունկցիոնալ բժշկական կենտրոնի կառուցմանը՝ հիմք դնելով Վարդանանց ՆԲԿ-ի զարգացման նոր փուլի:

Պարտատոմսերի թողարկում

1 մլրդ
ՀՀ դրամ

2.5 մլն
ԱՄՆ դոլար

90%
ձեռք բերված ֆիզիկական անձանց կողմից

Արդյունքների մասին

Պարտատոմսերն ընդամենը **4** օրում ամբողջությամբ սպառված էին՝ եզակի ցուցանիշ լինելով շուկայում, քանի որ պարտատոմսերի մոտ **90%**-ը ձեռք են բերել ֆիզիկական անձինք:

Ինթելլիջենթ Մենեջմենթ հոլդինգը, լինելով Հայաստանի ապահովագրական համակարգերի ձևավորման առաջամարտիկ, շարունակում է շուկային ներկայանալ միջազգային ֆինանսական և կորպորատիվ կառավարման **նորարար չափանիշներով**: Այս նախաձեռնության շնորհիվ ոչ միայն նպաստում ենք ենթակառուցվածքների և բիզնեսի առաջխաղացմանը, այլև ձևավորում առողջապահական ծառայությունների հեռանկարային աճը և ոլորտի հանդեպ վստահությունը: **Հաշվի առնելով նախագծի հաջող մեկնարկը՝ 2026թ.-ի գարնանը նախատեսվում է պարտատոմսերի թողարկման 2-րդ փուլը:**

ՌԱՁՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԻ

Մեր արժեքները

Խորքային մտածողություն
Think Deeper, Go Inside

Լուծումներ մշակողներ
Dream Team, Problem Solvers

Պլանավորումից մինչև արդյունք
Get Things Done, End-to-End Solution

Դրական փորձառություն՝ յուրաքանչյուր շփումից
Deliver WOW, Always Best Emotions

Բարձր նշաձող, իրական արդյունքներ
Never Settle, Set Ambitions Plans, Achieve

Մեր առաքելությունը

Մարդուն և հասարակությանը հնարավորություն տալ կենտրոնանալ կյանքի դրական և ստեղծագործ կողմերի վրա:

Մեր տեսլականը

Լրացնելով անվտանգության բացերը՝ ստեղծել պաշտպանվածության և հանգստության մթնոլորտ:

Ապագայի տեսլականը և նպատակը

ԷՖԵՍ-ը նպատակաուղղված է վերաիմաստավորելու ապահովագրության մշակույթը Հայաստանում՝ այն դարձնելով մարդկանց կենսակերպի բաղկացուցիչ մաս:

Առաջիկայում նախատեսվում է հաճախորդներին ներկայացնել առավել համապարփակ պրոդուկտներ, որոնց շրջանակում ծառայությունները հասանելի կլինեն բաժանորդագրության սկզբունքով: Աշխարհն այժմ ուղղված է դեպի լայֆսթայլ պրոդուկտների ձևավորմանը, ուստի հաճախորդը ոչ թե գնելու է ապահովագրական փաթեթ, այլ ունենալու է **տարբեր կենսակերպ ունեցող մարդկանց համար նախատեսված փաթեթների ամբողջություն:**

ԿԱՐԵՎՈՐԸ ԴՈՒ ԵՍ

ԷՖԵՍ-ը մշտապես կենտրոնանում է հաճախորդների կարիքներից բխող, անհատականացված լուծումների ստեղծման վրա՝ համադրելով տարիների ընթացքում կուտակված ապահովագրական փորձը և ժամանակակից թվային գործիքները:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԲԵՐ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԷՖԵՍ-ում յուրաքանչյուր ապահովագրական պրոդուկտի կենտրոնում մարդն է: Նրա առօրյան, ապրելակերպն ու նպատակներն են որոշում, թե ինչ նորարար լուծումներ են անհրաժեշտ կյանքի որակի բարելավման համար:

Քո առողջությունը

ԷՖԵՍ-ն առողջության ապահովագրության փաթեթներ է առաջարկում անհատների, ընտանիքների, ընկերությունների համար:

Փաթեթներ, որոնք գործում են՝ անկախ առողջության պարտադիր կամ կամավոր ապահովագրություն ունենալու հանգամանքից:

EFES MEDICAL CONCIERGE

Քո բուժօգնության կազմակերպումը բոլոր փուլերում

Ծառայությունն ապահովում է հասանելի բժշկական խորհրդատվության և բուժօգնության ամբողջական կազմակերպում՝ 24/7 խնամքից մինչև լիարժեք ապաքինում:

EFES HEALTHY BODY

Քո առողջության կանխարգելիչ բուժզննումը՝ մեկ այցելությամբ

Պրոդուկտը հնարավորություն է տալիս անցնել ամբողջական տարեկան բուժզննում՝ ներառելով մասնագիտական խորհրդատվություններ և լաբորատոր-գործիքային հետազոտություններ:

Առողջության համընդհանուր ապահովագրության հետ համադրվող փաթեթներ

Առողջության համընդհանուր ապահովագրությունը համակարգ է, որի նպատակն է քաղաքացիների համար ապահովել բժշկական ծառայությունների հասանելիությունը: ԱՀԱ-ի շրջանակում որոշակի բժշկական ծառայություններ իրականացվում են համավճարով: ԷՖԵՍ-ի ապահովագրական փաթեթները լրացնում են առողջության համընդհանուր ապահովագրությանը: Արդյունքում հաճախորդը ստանում է ամբողջական ֆինանսական պաշտպանություն:

Առողջության կամավոր ապահովագրության փաթեթներ

EFES Health պրոդուկտը ներառում է մի շարք անհատականացված փաթեթներ՝ ստեղծված տարբեր կարիքների և կյանքի փուլերի համար:

Մինչև 20 մլն ՀՀ դրամ ծածկույթով փաթեթներն ապահովում են ճկուն ընտրություն՝ սկսած հիմնական բժշկական ծառայություններից մինչև առավել ընդլայնված հնարավորություններ թե՛ մեծահասակների և թե՛ երեխաների համար:

Առողջության միջազգային ապահովագրության փաթեթներ

EFES LIFECARE BY MADANES

Հաճախորդների համար հասանելի է դարձել միջազգային բարձրակարգ բուժում՝ ապահովելով բուժման կազմակերպում Իսրայելի, Գերմանիայի, Իսպանիայի և Հարավային Կորեայի առաջատար կլինիկաներում: Առաջատար բժշկության և ամբողջական կազմակերպչական աջակցության շնորհիվ բուժառուն կենտրոնանում է միայն ապաքինման վրա՝ ազատված լինելով ֆինանսական խոչընդոտներից:

EFES ONCOCARE BY SWISS RE

Օնկոլոգիական հիվանդությունների համար ամբողջական ծածկույթ՝ ներառյալ քաղցկեղի բուժում ցանկացած փուլում և բժշկական երկրորդ կարծիքի հնարավորություն՝ վստահելի աջակցություն ապահովելու համար:

EFES INTERNATIONAL HEALTH INSURANCE BY ALLIANZ

Պրոդուկտն ընդգրկում է հիվանդանոցային բուժում, վիրահատություններ, վերականգնողական ընթացք և նույնիսկ օրգանների փոխպատվաստում՝ լիարժեք ապաքինման համար:

Քո մեքենան

EFES Roadcare Assistance

Ավտոմեքենայի աջակցություն ճանապարհին ցանկացած անսպասելի իրավիճակի դեպքում: Փաթեթը ներառում է **շարժական վուլկանացում, էվակուացիա, սթափ վարորդի ծառայություն և այլ աջակցություններ**, որոնք կօգնեն շարունակել ճանապարհն առանց խոչընդոտների:

EFES Autocare

Ամենաճկուն **ԿԱՍԿՈ** ապահովագրությունը Հայաստանում քո մեքենայի համար: Պաշտպանում է մեքենան, վարորդին ու ուղևորներին, ծածկում ՃՏՊ-ից առաջացած վնասները և բժշկական ծախսերը:

Քո տունը

EFES Homecare Assistance

EFES Homecare Assistance-ն ապահովում է բնակարանի և առանձնատան այն տեխնիկական օգնությունը, որի շնորհիվ կարող ես շարունակել քո օրն առանց որևէ անհանգստության: Փաթեթը ներառում է մասնագետների այց, տեխնիկական աշխատանքներ և ամենօրյա խնդիրների լուծում, որպեսզի խնայենք քո ժամանակը և կանխենք փոքր խնդիրների վերածումը մեծ վնասների:

Քո այգին

Գաղտնիք չէ, որ Հայաստանը հայտնի է իր բերքառատ հողով, որը տարիների ընթացքում առավել հարստացել է մարդկանց աշխատանքի, հոգատարության և նվիրվածության շնորհիվ:

ԷՖԵՍ-ը Հայաստանի գյուղատնտեսության ապահովագրության ձևավորման և մշակման հիմնական ընկերություններից մեկն է, որն ունի ոլորտի մեծ փորձառություն և գիտելիք ունեցող մասնագետների թիմ:

Գյուղատնտեսության ապահովագրությունը ԷՖԵՍ-ի համար կարևոր սոցիալական նշանակություն ունեցող ռազմավարական ուղղություն է: Ընկերության մոտեցումը հիմնված է գյուղատնտեսության կայուն զարգացմանն աջակցելու գաղափարի վրա՝ նպաստելով գյուղացիների պաշտպանվածությանը և ոլորտի ամրապնդմանը:

2026 թվականին ԷՖԵՍ-ը նախատեսում է ներկայացնել նոր լուծումներ՝ ուժեղացնելով գյուղատնտեսական ապահովագրության համակարգը և առաջարկելով գյուղացու կարիքների շուրջ կառուցված ժամանակակից պրոդուկտներ:

Քո ճամփորդությունը

2026 թվականի հունվարի 1-ից Վրաստան մուտք գործող բոլոր օտարերկրացիները պարտադիր պետք է ունենան գործող ճամփորդության ապահովագրություն: Այս փոփոխություններին ընդառաջ՝ ԷՖԵՍ-ը մշակել է **EFES Travel Georgia** պրոդուկտը ամբողջությամբ համապատասխանեցված Վրաստանի նոր պայմաններին: Ծրագիրը ներառում է բժշկական և ոչ բժշկական ծախսերի ծածկույթ՝ մինչև **30,000 եվրո** ապահովագրական գումարով, գործում է նույնիսկ **1** օրվա համար, չունի տարիքային սահմանափակում՝ առաջարկելով շուկայում մատչելի գին:

EFES Travel Georgia-ն ստեղծված է արտակարգ իրավիճակների ֆինանսական ռիսկերը նվազեցնելու և ճանապարհորդին ապահով, վստահ ու հանգիստ ճամփորդություն ապահովելու համար:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐ

Մեր կորպորատիվ փաթեթները մշակված են աջակցելու կազմակերպությունների արտոնությունների ծրագրերը՝ ապահովելով աշխատակիցների առողջության պաշտպանությունը և թիմի բարեկեցությունը: Ճկուն պայմանների և անհատական մոտեցման շնորհիվ յուրաքանչյուր ընկերություն կարող է ընտրել իր պահանջներին համապատասխան կորպորատիվ ապահովագրական փաթեթ:

Ծանոթացեք կորպորատիվ ապահովագրական փաթեթների ամբողջական առաջարկներին և մանրամասներին:

Մեր գործընկերները

ԷՖԵՍ-ի գործընկերների ցանցը ներառում է՝

400+
կորպորատիվ հաճախորդ

550+
տուրիստական ընկերություն

300+
հեղինակավոր բժշկական կենտրոն

Մեր գործընկերների շարքում են նաև դիվանագիտական, հանքարդյունաբերական, SS ոլորտի ընկերություններ ինչպես նաև բազմաթիվ մասնավոր և միջազգային կազմակերպություններ:

Ֆինանսական շուկայի մեր գործընկերները

acba
acba leasing
AMERIABANK
INECOBANK
evocaBANK
BANK AMIO
CONVERSE BANK
IDBank
AraratBank
BYBLOS BANK ARMENIA
ARMENIAN LEASING COMPANY
ԱՐՄԱՎԻՐԲԱՆԿ
FASTBANK

ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջ ենք ընթանում
հաստատակամ նպատակով

Համագործակցություն Acba Amex քարտապանների համար

Համագործակցելով **Ակբա բանկի** հետ՝ ԷՖԵՍ-ը մշակել է նոր հնարավորություն **Amex** քարտապանների համար, որի շնորհիվ վերջիններս կարող են ձեռք բերել ԷՖԵՍ-ի ապահովագրական պրոդուկտները **Membership Rewards** (MR) միավորների միջոցով:

Նախագծի շրջանակում Amex քարտապաններն իրենց MR միավորները կարող են վերածել՝

EFES Health Amex

Ներառում է չորս հիմնական ծառայություն՝ **տարեկան կանխարգելիչ բուժզննում, արտահիվանդանոցային բուժօգնություն, անհետաձգելի ներհիվանդանոցային բուժօգնություն և ԷՖԵՍ Ասիստանս**:

EFES Autocare Amex

Ներառում է **մեքենայի ապահովագրություն** մի շարք ռիսկերից:

Ճամփորդության ապահովագրություն EvocaTouch-ով

Էվոկաբանկը Հայաստանում առաջատար բանկերից է, որն իր հաճախորդներին առաջարկում է ճամփորդական արտոնություններ: Համագործակցելով Էվոկաբանկի հետ՝ ԷՖԵՍ-ը մշակեց **EFES Travel** ճամփորդական փաթեթը, որն օգտատերերին հասանելի է **EvocaTOUCH** հավելվածի միջոցով: Փաթեթն արագ և թիրախավորված լուծում է առաջարկում բանկի հաճախորդներին՝ ձեռք բերելու **EFES Travel** ճամփորդական ապահովագրությունը: Այս համագործակցության շնորհիվ ԷՖԵՍ-ը ևս մեկ անգամ ընդգծում է իր թվային լուծումներ առաջարկելու առաջնահերթությունը՝ ապահովելով պարզ, արագ և ժամանակակից լուծումներ:

Balt Assistance

Այս տարի ԷՖԵՍ-ը սկսել է համագործակցել **Balt Assistance** ընկերության հետ՝ ապահովելով իր հաճախորդներին արագ, վստահելի և համակարգված աջակցություն արտերկրում:

Balt Assistance-ն ավելի քան **27** տարվա փորձ ունեցող **միջազգային ասիստանս ընկերություն** է, որը մասնագիտացված է ճանապարհորդության ընթացքում և արտերկրում առաջացող բժշկական ու ոչ բժշկական իրավիճակներում ապահովագրված անձանց աջակցություն տրամադրելու ոլորտում:

BALT
ASSISTANCE Ltd.

Balt Assistance-ի հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս ԷՖԵՍ-ին իր ճամփորդական և միջազգային ապահովագրական պրոդուկտների շրջանակում ապահովել **շուրջօրյա աջակցություն**՝ պահպանելով որակի, արագ արձագանքման և հաճախորդակենտրոն սպասարկման բարձր չափանիշները:

ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ապահովագրական ընկերության գործունեության առանցքային բաղադրիչներից է վերաապահովագրության համակարգված և պատասխանատու կառավարումը, որը թույլ է տալիս ընկերությանը պահպանել ֆինանսական կայունություն և ապահովել խոշոր ռիսկերի արդյունավետ բաշխում: 2025 թվականին ԷՖԵՍ-ը մասնակցեց ԱՄԷ-ում տեղի ունեցած Intact Global Network Conference 2025 միջազգային համաժողովին, որը կազմակերպել էր գործընկեր Intact Insurance ընկերությունը: Համաժողովը միավորել էր ավելի քան 150 գործընկերների ամբողջ աշխարհից՝ ստեղծելով փորձի փոխանակման, մասնագիտական քննարկումների և համագործակցությունների զարգացման արդյունավետ հարթակ:

ԷՖԵՍ-ի մասնակցությունը միջազգային վերաապահովագրական հարթակներին վերահաստատում է ընկերության դիրքը՝ որպես վստահելի և պատասխանատու գործընկեր, որը գործում է միջազգային պրակտիկային և ռիսկերի կառավարման լավագույն չափանիշներին համապատասխան:

Միջազգային գործընկերներ

ԷՖԵՍ-ը կարևորում է միջազգային գործընկերային հարաբերությունների զարգացումը՝ դիտարկելով դրանք ոչ միայն որպես համագործակցություն, այլ որպես համատեղ արժեք ստեղծելու հնարավորություն:

Միջազգային վերաապահովագրողների, ասիստանս ծառայություններ մատուցող ընկերությունների և առողջապահական կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ ԷՖԵՍ-ը կարողանում է իր հաճախորդներին առաջարկել միջազգային փորձի վրա հիմնված լուծումներ՝ հարմարեցված տեղական շուկայի առանձնահատկություններին:

Այս գործընկերային էկոհամակարգը թույլ է տալիս ԷՖԵՍ-ին մշտապես թարմացնել իր կողմից առաջարկվող պրոդուկտները, բարձրացնել ծառայությունների որակը և ապահովել կայուն զարգացում՝ վստահության և երկարաժամկետ համագործակցության հիման վրա:

Նոր համագործակցություններ

2025 թվականին մենք ընդլայնեցինք գործընկեր վերաապահովագրող ընկերությունների շարքը՝ դառնալով **Starr** ընկերության ցանցային գործընկերը Հայաստանում:

Starr-ը համաշխարհային ապահովագրական և ներդրումային կազմակերպություն է՝ ավելի քան **100 տարվա փորձով**, որը գործում է **170 երկրներում**:

STARR INSURANCE

Նոր գործընկեր

Ավելի քան
100
տարվա փորձ

Գործունեություն
170
երկրներում

Այս համագործակցությունը մեր հերթական քայլն է՝ հասարակության համար ստեղծել միջազգային ապահովագրական ստանդարտներին համապատասխան պրոդուկտներ:

ԲԱՐԵԼԱՎԵԼՈՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՍԱՓՈՐՁԸ

Ընկերությունը շարունակել է զարգացնել EFES Online հարթակը և կատարելագործել բջջային հավելվածը՝ ապահովագրական ծառայությունները դարձնելով առավել հասանելի և պարզ:

EFES բջջային հավելված

Հատուցման գործընթացի հետևում

Հաճախորդները կարող են իրական ժամանակում հետևել հատուցման դիմումների ընթացքին:



Քարտային տվյալների կառավարում

Հավելվածում հնարավոր է ավելացնել կամ հեռացնել քարտային տվյալները՝ ապահովելով ավելի ճկուն և անվտանգ վճարային գործընթաց:

Download on the App Store

GET IT ON Google Play

Քարտի կցում և ավտոմատ գանձում

Ներդրվել է քարտի կցման հնարավորություն, որի միջոցով պայմանագրի գումարը ավտոմատ գանձվում է՝ համաձայն վճարման գրաֆիկի:





Bonus Assistance
powered by efes INSURANCE

Ճամփորդության ընթացքում պատահարների դեպքում կապ Բոնուս Ասիստանսի հետ

+374 33 700 802

+374 41 900 274

travelclaims@efes.am

Travel Assistance՝ հայալեզու աջակցությամբ

Ներդրվել է Travel Assistance ծառայությունը, որի շնորհիվ հաճախորդներն արտերկրում կկարողանան ստանալ հայալեզու աջակցություն՝ **Բոնուս Ասիստանսի** օգնությամբ:

Փոխկապակցված անձինք

Ավելացվել է «փոխկապակցված անձինք» բաժինը, որի միջոցով հնարավոր է պահպանել ընտանիքի անդամների կամ ընկերների տվյալները՝ պայմանագրեր կնքելիս գործընթացը արագացնելու համար:

Apple Pay-ով վճարում

Վճարման տարբերակներին ավելացվել է Apple Pay-ը՝ ապահովելով առավել արագ և հարմար վճարում:

EFES Roadcare Assistance ծառայությունների պատվերների գրանցում

Հաճախորդները կարող են օգտվել **Roadcare Assistance** ծառայությունների ամբողջական փաթեթից անմիջապես հավելվածի միջոցով՝ առանց որևէ զանգ կատարելու:



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԷՖԵՍ-ի գործունեության հիմքում սոցիալական նշանակության հստակ առաքելություն է ընկած: Մենք համոզված ենք, որ կայուն բիզնեսը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այն նպաստում է հասարակության զարգացմանը և ստեղծում է երկարաժամկետ արժեք համայնքների, գործընկերների և մեր միջավայրի համար:

Այս համոզմունքից ելնելով՝ ԷՖԵՍ-ը հետևողականորեն աջակցում է Հայաստանում իրականացվող այն նախաձեռնություններին, որոնք ուղղված են համայնքային ու կրթության զարգացմանը և մարդկանց կյանքի որակի բարելավմանը: Մեր մոտեցումը հիմնված է ոչ թե առանձին գործողությունների, այլ երկարաժամկետ և հետևողական աշխատանքների վրա:

Մենք մեր բոլոր նախաձեռնություններն ուղղում ենք ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների իրագործմանը՝ կենտրոնանալով այն նպատակների վրա, որոնք առավել համահունչ են մեր գործունեությանը և արտացոլում են ընկերության արժեքները:

ԷՖԵՍ-ը՝ Կողբ-Վարդավառի գլխավոր հովանավոր

Վերջին տարիներին Տավուշի մարզի **Կողբ** համայնք են ժամանում մարդիկ Հայաստանի տարբեր կետերից՝ միասին նշանավորելու Կողբ-Վարդավառ փառատոնը: Ամեն տարի փառատոնը միավորում է հարյուրավոր մարդկանց՝ ստեղծելով մշակութային միջավայր, որտեղ ընդգծվում են համայնքային զարգացումը, ստեղծարարությունը և մարդկային շփումները:

ԷՖԵՍ-ը իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում 2025 թվականին Կողբ-Վարդավառի **գլխավոր հովանավորն էր**:

Փառատոնում ներգրավվածությունը

Փառատոնի շրջանակում հանդես ենք եկել մի շարք նախաձեռնություններով՝ հարթակ ստեղծելով ԷՖԵՍ-ի արժեքներն առավել լայն լսարանին ներկայացնելու համար:

- Կազմակերպել ենք բաց դաս **«Անհետաձգելի բուժօգնություն»** թեմայով, որի ընթացքում փառատոնի մասնակիցները տեսական և գործնական մոտեցման միջոցով բացահայտել են բուժօգնության տեսանկյունից արագ արձագանքման եղանակները:
- Փառատոնի շրջանակում ԷՖԵՍ-ի տաղավարը աչքի էր ընկնում իր վառ գույնով, որտեղ մարդիկ միմյանց հետ կիսում էին միջոցառման ամենաջերմ և հիշարժան պահերը:

ԷՖԵՍ-ի գույնզգույն օդապարիկը վեր սլացավ

2025 թվականին ԷՖԵՍ-ը մասնակցեց Սքայբոլ ընկերության կողմից նախաձեռնված **օդագնացության միջազգային 7-րդ փառատոնին**:

Հոկտեմբերի 10-15-ը Հայաստանի տարբեր անկյուններում երկինքը զարդարվել էր գունեղ ու ջերմ թռիչքների տպավորիչ շքերթով՝ վերածվելով բացօթյա տոնի: Փառատոնի շրջանակում եզրափակիչ թռիչքն իրականացվեց վարդագույն քաղաքի սրտում՝ Հանրապետության հրապարակում՝ մայրաքաղաքի բնակիչներին նվիրելով դրական էներգիայով լի փորձառություն:

ԳՈՐԾԱՏՈՒԻ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Մեր մշակույթը

ԷՖԵՍ-ի ամենակարևոր արժեքը **մարդիկ** են:

Նվիրված թիմի և հետևողական աշխատանքի շնորհիվ ձևավորել ենք մեր եզակի մշակույթը: Մեր մարդիկ մարմնավորում են ընկերության այն **արժեքները**, որի շնորհիվ գաղափարները վերածվում են իրական արդյունքների:

Շարունակական կրթություն

Աճը շարունակական գործընթաց է: Մենք կարևորում ենք ուսուցումը, նոր գիտելիքների ձեռքբերումը և հմտությունների զարգացումը՝ ապահովելով մեր թիմի պատրաստվածությունը ապագայի մարտահրավերներին:

Ոլորտի առաջատար մասնագետներ

ԷՖԵՍ-ում մենք կառուցում ենք մասնագիտական ուղիներ: Միջազգային որակավորումները, մասնագիտական քննությունները և թիրախային վերապատրաստումները մեր մասնագետներին հնարավորություն են տալիս ոչ միայն խորացնել մասնագիտական հմտություններն, այլև զարգանալ ընկերության ներսում:

Հոգատար միջավայր

Աշխատանքի որակը սկսվում է բարեկեցությունից: Ճկուն աշխատանքային մոդելները, առողջապահական աջակցությունը և թիմային նախաձեռնությունները ստեղծում են միջավայր, որտեղ մարդիկ զգում են աջակցություն և արժեք:

Ապագա սերունդների կրթություն

Մենք ներդրում ենք անում ոչ միայն մեր թիմի, այլև ոլորտի ապագայի մեջ: Համագործակցելով կրթական հաստատությունների և ծրագրերի հետ՝ նպաստում ենք ապահովագրական ոլորտի նոր սերնդի ձևավորմանը Հայաստանում:

Նվաճելով նոր հորիզոններ

ԷՖԵՍ-ի մարդիկ

Անձնակազմի ընդհանուր նկարագիր

2025 թվականի ավարտին ընկերության աշխատակիցների ընդհանուր թիվը կազմել է 220: Մեր թիմը երիտասարդ և դինամիկ է՝ աշխատակիցների միջին տարիքը 32 տարեկան է: Սեռային բաշխումը հետևյալն է՝ 61% կին և 39% տղամարդ:

Մեր աշխատակիցները ԷՖԵՍ-ի հաջողության առանցքային գործոնն են: Մենք շարունակաբար աշխատում ենք թիմի փորձառությունը բարելավելու, մասնագիտական աճը խթանելու և համագործակցային մշակույթ ձևավորելու ուղղությամբ:

Տարվա ընթացքում ընկերությունը զարգացրել է գործատուի դիրքավորումը՝ ընդլայնելով արտոնությունների փաթեթը, ներդնելով կրթական նոր ծրագրեր և մասնակցելով բուհական աշխատանքային էքսպոներին:

2025 թվականին ԷՖԵՍ-ն ունի՝

220 Աշխատակից

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ՝



Կին

Տղամարդ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԸ՝

32

2342 թեկնածու
դիմել է ԷՖԵՍ աշխատանքի ընդունվելու համար

76 թեկնածու
միացել է ԷՖԵՍ-ի թիմին

37 աշխատակից
գրանցել է մասնագիտական աճ

Ընկերության խորհուրդը

Խորհրդի նախագահ

ԴԵՎԻ ԽԵՉԻՆԱՇՎԻԼԻ

Համաշխարհային ապահովագրական շուկայի մեծանուն մասնագետներից մեկն է՝ ոլորտում ունենալով տասնամյակների ղեկավարման փորձ:

Խորհրդի անդամ

ՄԱՍԻՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Չարտերացված ֆինանսական վերլուծաբանների ինստիտուտի անդամ է և ունի ապահովագրական և ֆինանսական ոլորտի փորձ:

Խորհրդի անդամ

ՄԽԻԹԱՐ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Ունի զբոսաշրջության ոլորտի փորձ և առանձնանում է իր հաճախորդակենտրոն մոտեցմամբ:

Խորհրդի անդամ

ՏԻԳՐԱՆ ՓԻՆԱՋՅԱՆ

ՀՀ Փաստաբանների պալատի անդամ է և ծավալում է իրավաբանական խորհրդատվության գործունեություն:

Խորհրդի անդամ

ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄՅԱՆ

Հանրային ֆինանսների կառավարման միջազգային խորհրդատու է և ՀՀ ֆինանսների նախկին նախարար:

Ընկերության ղեկավար կազմը

Գլխավոր գործադիր տնօրեն

ԱՐԵՎՇԱՏ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Ավելի քան 25 տարի ՀՀ ապահովագրական շուկայի զարգացումն ապահովող հիմնական անձանցից մեկն է:

Գլխավոր գործադիր տնօրենի առաջին տեղակալ / Ֆինանսական տնօրեն

ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ունի ապահովագրության ոլորտում ֆինանսների հարուստ փորձ և կառավարել է հաշվապահական, ֆինանսական, ՏՏ և իրավաբանական թիմեր:

Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ / Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն

ԼԻԼԻԹ ՇՄԱՎՈՆՅԱՆ

Արդեն 25 տարի է, ինչ իր աշխատանքային էթիկայի շնորհիվ զարգացնում է ՀՀ ապահովագրության շուկան:

Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ / Գործառնական տնօրեն

ԼԵՎՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

Ունի ապահովագրության ոլորտում ավելի քան 10 տարվա փորձ: Հանդիսանում է Չարտերացված ապահովագրողների ինստիտուտի դիպլոմակիր:

Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ / Զարգացման գծով տնօրեն

ԻՐԻՆԱ ԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ

Չարտերացված ապահովագրողների ինստիտուտի դիպլոմակիր է և վերաապահովագրության փորձառու մասնագետ:

Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ / Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն

ՍԵՐԳԵՅ ՇԱՀԻՆՅԱՆ

Ունի ապահովագրության ոլորտում մանրածախ վաճառքների կազմակերպման և կառավարման երկարամյա փորձ:

Զարգացում և ուսուցում

Մենք շարունակաբար աշխատում ենք թիմի փորձառությունը բարելավելու, մասնագիտական աճը խթանելու և համագործակցային մշակույթ ձևավորելու ուղղությամբ: Շարունակական կրթությունը մեր թիմի գլխավոր արժեքներից է, որի արդյունքում մենք ունենք միջազգային որակավորումներ ունեցող մասնագետներ՝ CII, CFA, CIA, FRM, ինչպես նաև միջազգային լավագույն բուհերի՝ Քեմբրիջի և Օքսֆորդի համալսարանների շրջանավարտներ:

2025 թվականին իրականացրել ենք 21 արտաքին թրեյնինգ, ներառյալ՝ AI դասընթացներ, անգլերենի ուսուցում, աուդիտորական գործընթացների արդյունավետության բարձրացման ծրագրեր, շահութահարկի և աշխատանքային օրենսդրության վերջին փոփոխությունների վերաբերյալ դասընթացներ, ինչպես նաև CFA, FRM և միջազգային ակտուարական քննություն-ներին նախապատրաստող ծրագրեր:

Ներգրավվածություն և թիմային փորձառություն

Տարվա ընթացքում կազմակերպվել են թիմբիլդինգներ և ոչ ֆորմալ միջոցառումներ՝ ուղղված թիմային համագործակցության խթանմանը:

ԷՖԵՍ-ում յուրաքանչյուր աշխատակից բարձր է գնահատվում իր ցուցաբերած հմուտ աշխատանքի և գրանցած հաջողությունների համար: Մեր նպատակն է ստեղծել աշխատանքային միջավայր, որտեղ բոլորը ստանում են աջակցություն և առաջխաղացմանն ուղղված հստակ տեսլական: Մենք գիտակցում ենք, որ ճիշտ աջակցությամբ մարդիկ հնարավորություն են ունենում իրենց մասնագիտական գիտելիքներն օգտագործել թիմային մեծ հաջողություններ գրանցելու համար:

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարզ ու խաղաղ՝
ինչպես կապույտ հորիզոնը

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	5	46,810	11,430
Ավանդներ բանկերում	6	1,675,882	1,710,880
Տրամադրված փոխառություններ	7	538,975	-
Ներդրումային արժեթղթեր	8	904,239	2,228,592
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	8	3,738,602	2,374,523
Վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ	9	3,078,202	1,118,078
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	10	1,389,442	1,335,661
Հետաձգված հարկային ակտիվ	24	-	50,927
Այլ ակտիվներ	11	115,370	33,486
Ընդամենը՝ ակտիվներ		**11,487,522**	**8,863,577**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	9	4,074,909	3,130,218
Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	9	83,700	27,600
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	12	3,476,711	2,245,718
Ընթացիկ հարկային պարտավորություն		60,167	-
Հետաձգված հարկային պատավորություն	24	19,038	-
Այլ պարտավորություններ	13	821,442	1,117,914
Ընդամենը՝ պարտավորություններ		**8,535,967**	**6,521,450**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	14	2,500,000	2,500,000
Չբաշխված շահույթ (կուտակված վնաս)		194,016	(215,133)
Այլ պահուստներ		257,539	57,260
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**2,951,555**	**2,342,127**
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**11,487,522**	**8,863,577**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. մարտի 5-ին:

Արևշատ Մելիքսեթյան

Գործադիր տնօրեն

Հայկուհի Բաբայան

Գլխավոր հաշվապահ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Ապահովագրական հասույթ	15	12,601,065	10,260,471
Ապահովագրական ծառայությունների գծով ծախս	16	(7,878,474)	(6,151,673)
Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք նախքան պահվող վերաապահովագրության պայմանագրերը		**4,722,591**	**4,108,798**
Վերաապահովագրավճարների բաշխում	15	(7,931,389)	(5,350,386)
Վերաապահովագրողների կողմից փոխհատուցված գումարներ	17	5,521,269	2,508,404
Պահվող վերաապահովագրության պայմանագրերից զուտ ծախս		**(2,410,120)**	**(2,841,982)**
Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք		**2,312,471**	**1,266,816**
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	18	615,958	479,629
Տոկոսային ծախս	18	(280,907)	(141,119)
Ֆինանսական ակտիվների պարտքային կորուստների գծով ծախս	19	(1,259)	(181)
Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արտարժույթային փոխարկումից զուտ վնաս		(14,773)	(22,803)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչումից զուտ օգուտ		65,405	-
Զուտ ներդրումային եկամուտ		**384,424**	**315,526**
Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով ֆինանսական եկամուտ	20	11,653	44,940
Թողարկված ապահովագրության պայմանագրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս)	21	(3,896)	504
Ապահովագրության գծով զուտ ֆինանսական եկամուտ		**7,757**	**45,444**

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Այլ եկամուտ		2,210	7,403
Մաշվածություն և ամորտիզացիա	10	(253,195)	(85,568)
Անձնակազմի գծով ծախսեր	22	(1,656,162)	(1,221,792)
Այլ ծախսեր	23	(302,189)	(247,508)
Շահույթ մինչև հարկումը		**495,316**	**80,321**
Շահութահարկի գծով ծախս	24	(86,167)	(3,777)
Տարվա շահույթ		**409,149**	**76,544**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ		244,724	58,883
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		(480)	8,706
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(43,965)	(12,167)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով զուտ օգուտ		**200,279**	**55,422**
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ շահութահարկից հետո		**200,279**	**55,422**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**609,428**	**131,966**

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Չբաշխված շահույթ (Կուտակված վնաս)	Ընդամենը
Հաշվեկշիռը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,500,000**	**57,260**	**(215,133)**	**2,342,127**
Տարվա շահույթ	-	-	409,149	409,149
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	307,423	-	307,423
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ գումար	-	(62,699)	-	(62,699)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	(480)	-	(480)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	(43,965)	-	(43,965)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**200,279**	**409,149**	**609,428**
Հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,500,000**	**257,539**	**194,016**	**2,951,555**

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
Հաշվեկշիռը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,000,000**	**1,838**	**(291,677)**	**1,710,161**
Տարվա շահույթ	-	-	76,544	76,544
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	58,883	-	58,883
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	8,706	-	8,706
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	(12,167)	-	(12,167)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**55,422**	**76,544**	**131,966**
Բաժնետիրական կապիտալի ավելացում	500,000	-	-	500,000
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	**500,000**	**-**	**-**	**500,000**
Հաշվեկշիռը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,500,000**	**57,260**	**(215,133)**	**2,342,127**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված ապահովագրավճարներ	12,078,314	11,145,963
Փոխանցված վերաապահովագրավճարներ	(3,411,463)	(3,597,109)
Վճարված հատուցումներ և այլ ծախսեր	(6,925,700)	(4,587,124)
Վճարված հատուցումներում վերաապահովագրողի մասը	89,832	67,615
Ստացված գումարներ սուբրոգացիայի գծով	30,137	3,202
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(1,655,482)	(1,368,337)
Վճարումներ մատակարարներին	(292,910)	(268,032)
Վճարումներ միջնորդներին	(279,049)	(440,814)
Վճարված հարկեր, բացառությամբ շահութահարկի	(421,580)	(316,408)
Այլ մուտքեր (ելքեր)	(70,502)	681,227
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) մինչև շահութահարկը	**(858,403)**	**1,320,183**
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**(858,403)**	**1,320,183**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի վաճառք (առք)	711,505	(3,308,544)
Բանկերում ավանդների մարում (տեղաբաշխում)	184,518	(202,140)
Տրամադրված փոխառություններ	(516,949)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(335,702)	(530,381)
Ներդրումային գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**43,372**	**(4,041,065)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	500,000
Վարձակալության գծով պարտավորության մարում	(125,747)	(39,667)
Վարկերի ստացում	999,508	2,112,921
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**873,761**	**2,573,254**
Դրամական միջոցների զուտ աճ (նվազում)	**58,730**	**(147,628)**
Դրամական միջոցներ տարվա սկզբի դրությամբ	11,430	187,665
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	(23,350)	(28,607)
Դրամական միջոցներ տարվա վերջի դրությամբ (Ծանոթագրություն 5)	**46,810**	**11,430**

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«ԷՖԵՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը և խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԷՖԵՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի»* (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց

վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Լիլիթ Բաղդասարյան
Առաջադրանքի ղեկավար

5 մարտի, 2026թ.

efes INSURANCE

ԴԵՊԻ ԿԱՊՈՒՅՏ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

efes INSURANCE

ՀՀ, ք. Երևան, 0009, Զարոբյան 11
+374 10 700800 | www.efes.am

ԷՖԵՍ ԱՓԲԸ-Ն ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ